Գնդեվազ

Բնակչությունը՝ 773

Գնդեվազը գտնվում է Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան բարձր սարավանդի վրա,Երևան-Ջերմուկ նոր խճուղու ձախ կողմում, ծովի մակարդակից 1850 մետր բարձրության վրա։ Գնդեվազի շուրջ բարձրացող ոչ բարձր լեռները նրա տեղը դարձնում են մի գեղեցիկ ամֆիթատրոն։ Մարզկենտրոն Եղեգնաձորից հեռու է 30 կմ, մայրաքաղաք Երևանից հեռավորությունը՝ 163 կմ։ Մոտ քաղաքը Ջերմուկն է, որից հեռավորությունը 12 կմ է։ Բնակիչները հայեր են:

Գնդեվազը պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի Վայոց Ձոր գավառի հնագույն բնակավայրերից է։ Մեզ հասած առաջին գրավոր հիշատակությունը Սիսական տան մեծ պամիչ Ստեփանոս Օրբելյանինն է, ուր ասվում է, որ Սյունաց Սոփի իշխանուհին Վայոց Ձորի ակ Գնդեվանք եկեղեցին կառուցելու հետ (936 թ.) հիմնել է նաև համանուն գյուղը և նվիրել վանքին։ Չնայած պատմիչի այս տեղեկությանը՝ տարածքի պատմամշակութային որոշ հուշարձաններ թույլ են տալիս պնդելու, որ բնակավայրը շատ ավելի հին է:

Պատմական հնություններից են Գնդեվազում գտնվող Ս.Աստվածածին քարաշեն եկեղեցին (1686թ.) և 11-րդ դարի ջրանցքը։ Գնդեվազի ջրանցքը կառուցվել է 1008 թվականին, Սյունիքի Վասակ թագավորի ժամանակ։ Վանքի վանահայր Սարգիսը Դիտավոր լեռան վրայից Ձկնարած գետի ակունքից ջուր է բերել տալիս։ Ջրանցքի երկարությունը 22 կմ է։ Այն ժամանակներում ջրանցքի ջրով ոռոգվել են մոտ 400 հա վանքապատկան հողեր, այժմ՝ մոտ 1000 հա:

Գնդեվազի այժմյան վարչական տարածքում պահպանվել են պատմական մի քանի բնակատեղիների ավերակներ, որոնց ուսումնասիրությունը կարևոր է:

Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 19-րդ դարի առաջին կեսին Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից Վայոց ձորի Խաչիկ, Գնիշիկ, Արենի գյուղերում վերաբնակված, ապա մասամբ Գնդեվազ տեղափոխված բնակիչների սերունդներն են։ Մի քանի տոհմերի նախնիներ ներգաղթել են 20-րդ դարի սկզբներին այլ տեղերից:

Արխիվային նյութերից հայտնի է, որ 1873 թ. գյուղն ունեցել է 303 բնակիչ, իսկ ներկայումս ունի 1000-ից ավելի բնակիչ:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Գյուղն ունի դպրոց, բուժկետ, մշակույթի տուն:

Գյուղում գործում է կենցաղային ծառայության 1 և առևտրի 5 կետեր: